Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Անահիտ Ավանեսյան, առողջապահության նախարար

2. **Գործուղման վայրը և ժամկետները**

2024 թվականի հուլիսի 17-18-ը, Վրաստան (Թբիլիսի)

3. **Հրավիրող կողմը**

Վրաստանի օկուպացված տարածքներից ներքին տեղահանված անձանց, աշխատանքի, առողջապահության և սոցիալական հարցերով նախարար

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Այցի նպատակն էր խորացնել համագործակցությունը Հայաստանի և Վրաստանի առողջապահության ոլորտի գերատեսչությունների միջև, ինչպես նաև քննարկել ոլորտին առնչվող երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

5. **Քննարկված թեմաները**

Հանդիպման ընթացքում քննարկել ենք առողջապահական ոլորտին առնչվող տարաբնույթ հարցեր, համընդհանուր խնդիրներ, որոնց լուծման շուրջ կարևորվել է երկու երկրների առողջապահական գերատեսչությունների առավել սերտ փոխգործակցությունը, առկա մարտահրավերներին ժամանակին անդրադառնալը:

Անդրադարձ է եղել համագործակցության խորացմանը և փորձի փոխանակման հնարավորություններին, մասնագիտական խմբերի համար հարթակների ձևավորման գաղափարին:

Ներկայացրել եմ երկրում էլեկտրոնային առողջապահության բնագավառում վերջին բարեփոխումները, շեշտադրվել է բուժանձնակազմի շարունակական կրթական բաղադրիչի կարևորությունը:

Համատեղ ընդգծվել է դեղերի գների և գրանցման քաղաքականությունը պարբերաբար վերանայելու անհրաժեշտությունը, կարևորվել է համատեղ ծրագրերի իրականացումը՝ համընդհանուր գործընկերների, մասնավորապես՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ներգրավմամբ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հանդիպում է կայացել Վրաստանի խորհրդարանի ներկայացուցիչ, Վրաստանի առողջապահության պաշտպանության և սոցիալական հարցերի կոմիտեի նախագահ Զազա Լոմինաձեի հետ: Հանդիպման շրջանակներում շարունակվել են առողջապահական հարցերի շուրջ քննարկումները:

Գործուղման շրջանակներում այցելել եմ Թբիլիսիի «Թոդուա» բազմապրոֆիլ բժշկական կենտրոն:

Շրջայցի ընթացքում վրացի գործընկերների կողմից ներկայացվել է բժշկական կենտրոնի գործունեության առանձնահատկությունները, պետական ֆինանսավորմամբ բնակչությանը մատուցվող ծառայությունները, ինչպես նաև քաղցկեղի բուժմանն ուղղված մոտեցումները:

Հետաքրքրություն է ներկայացրել Վրաստանում ուռուցքաբանության ոլորտում կատարված փոփոխությունները: Քննարկվել են ոլորտում փորձի փոխանակման հնարավորությունները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Այցի ընթացքում քննարկվեցին հետագա երկկողմ համագործակցության ուղղությունները, պայմանավորվածություն ձեռք բերվեց խորացնել համագործակցությունը Հայաստանի և Վրաստանի առողջապահության

նախարարությունների միջև: Երկու կողմերն էլ առողջապահության ոլորտի զարգացմանն ուղղված աշխատանքներ տանելու պատրաստակամություն են հայտնել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպումների ընթացքում առաջարկվել է ամրապնդել կողմերի փոխգործակցությունն ու կապերը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

2024 թ. հուլիսի 19

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը	ՀՀ առողջապահության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը	N 675--Ա 15.07.2024թ.
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) (*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)	Նախարար Անահիտ Ավանեսյան
4. Գործուղման վայրը	Վրաստան ք. Թբիլիսի
5. Գործուղման ժամկետները	2024թ.Հուլիսի 17-18-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝	
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)	Գիշերավարձ
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*) (*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)	Օրապահիկ, ճանապարհածախս

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անահիտ Ավանեսյան*	*Անուն, ազգանուն 2*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	Էկոնոմ դաս		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	24258.0		24.3
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	0.0		0.0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0.0		
	Օրերի քանակը	0		
	Ընդամենը (դրամ)	0.0		0.0
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 74		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	28729		0
	Օրերի քանակը	2		
	Ընդամենը (դրամ)	57458.0		57.5
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			
	Այլ ծախսեր (նկարագրել)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		81716.0		81.8

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը (ստորագրություն) 17.07.2024թ.